# Վերնագիր՝ Արտաշես Ա-ի բարեփոխումները

**Առարկան՝** Հայոց պատմություն

**Դասարանը՝** 7- րդԲ

**Տևողությունը՝** 6 շաբաթ

Սովորողներ՝

1. Բաղդասարյան Աշոտ
2. Հովհաննիսյան Էլինար Գարիկի
3. Գալստյան Գոռ Հայկի
4. Գրիգորյան Էդուարդ Դավիթի
5. Գինոսյան Մարատ Արայի
6. Կարապետյան Կարինե Շահենի
7. Կարապետյան Լևոն Արտյոմի
8. Դավթյան Միլենա Աշոտի
9. Միքայելյան Էրիկ Միքայելի
10. Տիգրանյան Դավիթ Գևորգի
11. Համբարձումյան Սոնա Միսակի
12. Հայրապետյան Ալվարդ Արարատի

**Նպատակը՝**

Սովորողները կծանոթանան Արտաշեսյան թագավորության կառավարման համակարգին:

Սովորողները կվերլուծեն Արտաշես Ա-ի թագավորությունում տեղի ունեցած բարեփոխումները:

Սովորողները կուսումնասիրեն Արտաշեսյան թագավորության քաղաքակրթական ժառանգության դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

**Նյութեր՝**

1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ Արտաշեսյան թագավորության մասին:

2.Արտաշեսյան թագավորության քարտեզները:

3. Արտաշեսյան թագավորության նկարներ և տեսանյութեր:

4. Սկզբնաղբյուրներ:

5. Թուղթ, մկրատ, սոսինձ և մարկերներ:

**Վերջնարդյունքը՝** Ստանալ Արտաշես Ա-ի հրամանագիրքը

**Ընթացակարգը՝**

**Շաբաթ 1:**

1. ***Ծանոթացում Արտաշեսյան թագավորությանը.***

Սովորողները կդիտեն կարճ տեսանյութ Արտաշեսյան թագավորության մասին:

Ուսուցիչը հակիրճ պատմական ակնարկ կներկայացնի և կբացատրի Արտաշեսյան թագավորության կարևորությունը հայոց և համաշխարհային պատմության մեջ:

**Շաբաթ 2:**

2. ***Կազմակերպչական հարցեր.***

Ստեղծել աշխատանքային 4 խումբ՝ բաղկացած 3 հոգուց:

Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :

**Շաբաթ 3:**

3. ***Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:***

Խմբերը կազմում են Արտաշես Ա-ի հրովարտակների կետերը՝ մինչև 10 կետ:

Օրինակ՝ 1. Հրովարտակ հողային բարեփոխման մասին

Այրարատ նահանգ ՔԱ. 180թ.

Ես Արտաշես որդին Զարեհի Երվանդականը հրամայում եմ՝

1.Սահմանաքարեր դնել մասնավոր և համայնքային հողերի միջև....

**Շաբաթ4:**

4. ***Այցելություն թանգարաններ,հանդիպում թեմայի մասնագետների ,բանախոսների հետ:***

1.Սովորողները կայցելեն Պատմության թանգարան կամ կլսեն հրավիրյալ բանախոսից, ով լրացուցիչ տեղեկություններ կհաղորդի Արտաշեսյան թագավորության մասին:

2.Այնուհետև կվերանայեն նախորդ օրերին արծարծված թեմաները և կպատրաստվեն վերջնարդյունքի ստեղծմանը:

**Շաբաթ 5:**

Ստեղծել Արտաշես Ա-ի Հրամանագիրքը ,օգտագործել ՏՀՏ գործիքներ հրամանագիրքը պատրաստելու և տպագրելու համար:

**Շաբաթ 6:**

8. ***Նախագծի ներկայացում.***

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը և կգնահատվեն: